ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի

Դատական կարգադրիչների ծառայությունը, որպես պետական ծառայության հատուկ տեսակ ստեղծվել է 2008 թվականի հունվարի 1-ին՝ ՀՀ դատական օրենսգրքի 196-րդ և «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածների հիման վրա: 2008-2010թթ. դատական կարգադրիչների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել են համապատասխան միջոցներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ դատական օրենսգրքի մի շարք (197-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 210-րդ, 220-րդ, 225-րդ, 227-րդ) հոդվածների համաձայն՝ դատական կարգադրիչների ծառայության համապատասխան գործառույթները կարգավորվում են «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ քրեակատարողական ծառայողները, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողները «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի հիման վրա հավասարեցված են զինծառայողներին, վերջիններս էլ ազատված են պարտադիր սոցիալական ապահովության և եկամտահարկի գծով վճարումներից՝ դատական կարգադրիչների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից չեն կատարվել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված վճարումները, որի հետևանքով առաջացած պարտավորությունները կազմում են *350092.3 հազ. դրամ,* այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման.

«Փաստացի սոցիալական ապահովության վճարներ» հոդվածով- 287914.5 հազ. դրամ:

«Այլ հարկեր» հոդվածով- 62177.8 հազ. դրամ (եկամտահարկ),

Ի կատարումն ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կայացած՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ դատական դեպարտամենտին նախատեսվելիք հատկացումների մասին խորհրդակցության N23.6/[48775]-10 արձանագրության հանձնարարականի 3-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև սույն թվականի օգոստոսի 24-ին կայացած՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ դատական դեպարտամենտին նախատեսվելիք հատկացումների

մասին խորհրդակցության N23.6/[87035]-11 արձանագրության հանձնարարականի 3-րդ կետի 1-ին ենթակետի՝ 2008-2010թթ. պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առաջացած ապառքները, ինչպես նաև եկամտահարկի գծով առաջացած հարկային պարտավորությունները մարելու նպատակով ներակայացնում ենք «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: